ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՍԵՎԱՆԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ք. Սևան Կարմիր բանակի 68
հեռ. +374 261 2-34-00

N 470

08.07.2021 թ.

<<ԱԶՈՒՌ>> ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ

ԱՐՄԱՆ ԵՐԻՋԱՆՅԱՆԻՆ

ք. Երևան Նորք 1-ին նրբ. 5 տ.
ՀՎՀՀ 02288121

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի և <<ԱԶՈՒՌ>> ՍՊԸ-ի միջև 15.02.2021թ-ին կնքված ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/16-1 ծածկագրով պայմանագիրն միակողմանիորեն լուծելու մասին

ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և <<ԱԶՈՒՌ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 15.02.2021թ-ին կնքված ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/16-1 ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ <<ԱԶՈՒՌ>> ՍՊԸ-ն պարտավոր էր պատվերն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարել ստանձնած պարտավորությունները, սակայն <<ԱԶՈՒՌ>> ՍՊԸ-ն պայմանագրով հաստատված 1000 լիտր արևածաղկի ձեթից մատակարարել է 700 լիտրը: ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի կողմից 04.06.2021թ-ին և 23.06.2021թ-ին պատվերի միջոցով <<ԱԶՈՒՌ>> ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին և բազմիցս անգամներ հեռախոսազանգով տեղեկացվել է անհրաժեշտ քանակի մատակարարման վերաբերյալ, սակայն <<ԱԶՈՒՌ>> ՍՊԸ-ի կողմից արևածաղկի ձեթի մատակարարում չի իրականացվել:

Վերը նշված հանգամանքը հանդիսանում է Ընկերության կողմից պայմանագրի էական խախտում, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.7.1 ենթակետի բ) կետը ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ն ստիպված է Պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար միակողմանի լուծել 2021 թվականի փետրվարի 15-ին կնքված թիվ ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/16-1 ծածկագրով Պայմանագիրը և

Պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 849000 ՀՀ դրամի որակավորման և 84900 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները: <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ն նաև նախաձեռնում է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Միևնույն ժամանակ Ձեզ եմ ներկայացնում պայմանագրերի չկատարված մասով հաշվարկված տույժերի հաշվարկը.

տույժի հաշվարկ՝ 254700 X 0.05% = 127,35 ՀՀ դրամ,

22 աշխատանքային օր /04.06.2021թ-ից մինչև 07.07.2021թ-ը/ պայմանագրի չկատարման համար՝ 127,35 X 22 = 2801,7 ՀՀ դրամ,

Տեղեկացնում եմ, որ <<ԱԶՈՒՌ>> ՍՊԸ-ի կողմից 5 աշխատանքային օրվա ընթացքում ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի 16034026004300 հաշվեհամարին պետք է փոխանցվի 2801,7 ՀՀ դրամ Պայմանագրի 6.2 կետի համաձայն որպես տույժ:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից չի կատարվել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ն միակողմանի հրաժարվում է կնքված ապրանքների մատակարարման գնման պայմանագրից՝ համարելով այն միակողմանի լուծված, և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՏՆՕՐԵՆ՝ Դ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ